ՄՇՈ ՍԲ. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ԴՐՎԱԳ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայոց ամենանշանավոր վանքերից է Մշո Սբ. Կարապետ (Գլակա) վանքը, որի հիմնադիրը Սուրբ Գրիգոր Լուսավորիչն էր, և որը գործել է ընդհուպ 1915 թվականը: Դեռևս նախորդ դարի սկզբին Սբ. Կարապետի միաբան Կարապետ վարդապետ Լուսարարյանը հրատարակել է վանքի պատմությունն ու առաջնորդների գավազանագիրքը[1]: Հոչակավոր վանքին տարբեր առիթներով անդրադարձել են նաև այլ հետազոտողներ:

Ստորև կանդրադառնանք Սբ. Կարապետ վանքի և Շահ Արմենների կամ Խլաթի ամիրայության պատմության 1185–1186 թվականների դեպքերը ներկայացնող մի բնագրի, որը Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ մուծված հետագայի հավելում է: Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) №8481 ձեռագրից քաղելով՝ 1942 թ. այն հրատարակել է Ա. Աբրահամյանը, որպես Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մի հատված[2]: Հրատարակությունից հետո քննադատական հոդվածով հանդես են եկել Լ. Խաչիկյանը և Վ. Հակոբյանը[3]: Նրանց դիտողություններից մեկը վերաբերում է Ժամանակագրության ընդգրկմանը. «Ստեփանոս Օրբելյանի անունով հրատարակված ժամանա-

---

[1] *Կ. Լ ո ւ ս ա ր ա ր ե ա ն. Գաւազանագիրք յաջորդութիւնք վանահարց ուխտիս Ս. Կարապետի Տարօնոյ, Երուսաղեմ, 1912:*

[2] *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երևան, 1942, էջ 19-20:*

[3] *Լ. Խ ա չ ի կ յ ա ն, Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները.– ՀՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի Տեղեկագիր, 1949, №2, էջ 77-87: Գրախոսության հիմնական մասը նվիրված է Ստեփանոս Օրբելյանի հեղինակության հանգամանքի ժխտմանը (էջ 77-82): Այս հարցը Վ. Հակոբյանն արծարծել է նաև այլ առիթով («Մանր ժամանակագրություններ», XIII–XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 32-34): Հարկ է նշել, որ «Ժամանակագրության» մի քանի հատվածին Հ. Քոյանի կազմած ցուցակի միջոցով ծանոթացած առաջին բանասերը՝ Ն. Ակինյանը, չի կասկածել, որ հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1921, էջ 177-178, Ցուցակ ձեռագրաց որ ի Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1976, էջ 11): Այս տեսակետը հիմնավորել է նաև Է. Բաղդասարյանը (տե՛ս Է. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն. XIII դարի մի ժամանակագրության հեղինակի մասին.– ՊԲՀ, 1971, №2, էջ 210-216): Մեր կարծիքով՝ Սամվել Անեցու «Ժամանակագրության» շարունակությունը կազմող՝ 1193-1290 թթ. ժամանակահատվածի հեղինակը, որն իրեն կոչում է «Ստեփանոս անուամբ այցելու», նաև նշում է, որ Կոստանդին Բ Կատուկեցու (1286-1289) աթոռանկությունից հետո հաջորդ կաթողիկոսի ընտրության համար իրեն հրավիրել են Սիս («...հրաւիրեցին զմեզ և զայլ եպիսկոպոսունս և զայլ իշխանս Արևելից՝ երթալ ի թագաւորութիւնս մեր ի Սիս»), բայց ինքը չի գնացել՝ «...որում անպարապ գտեալ ո՛չ ժամանաեցաք» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, էջ 22, 31, հմմտ. Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ ե ա ն. Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 440-441), չէր կարող ուրիշ մեկը լինել, քան Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը: Լ. Խաչիկյանի և Վ. Հակոբյանի գրախոսականի երկրորդ մասը՝ Ժամանակագրության հրատարակության մեջ տեղ գտած բազմաթիվ թերությունների արդարացի քննադատությունն է:*

կագրության ճիշտ կեսը (էջ 11–21, տող 27) պատկանում է Ս. Անեցուն և Ստեփանոսի ժամանակագրության հետ առնչվում է միայն այնքանով, որքանով վերջինիս նպատակն է եղել շարունակել Ս. Անեցու Ժամանակագրությունը: Ուստի հրատարակիչը սխալ է գործել Ստեփանոսի անվամբ հրատարակելով Մատենադարանի №8481 ձեռագրի 197ա–203բ էջերի բազմաթիվ հատվածները: Ստեփանոսի Ժամանակագրությունը սկսվում է ձեռագրի 204 էջից»[4]: Վ. Հակոբյանը հետագայում հենց այդպես էլ վարվել է «Մանր ժամանակագրությունները» հրատարակելիս, ուր «Ստեփանոս եպիսկոպոսի տարեգրությունը» սահմանազատել է Սամվել Անեցու երկից[5]:

Սակայն նկատենք, որ Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրությանը նախորդող հատվածը Սամվել Անեցուն է պատկանում միայն մասամբ: Այն բառացիորեն ողողված է հավելումներով, և քննության առարկա հատվածն էլ նման մի հավելում է: Այս հարցին մեր անդրադարձի պատճառն այն է, որ հիշյալ հատվածը ավելի ընդարձակ և ստույգ ընդօրինակությամբ պահպանվել է նաև ՄՄ №9796 ձեռագրում[6], Սամվել Անեցու Ժամանակագրության վերջում: Որպես Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրության մաս հրատարակված հատվածի թվականը սխալ է՝ ՈԼ (1181)[7], իսկ 9796 ձեռագրում՝ ՈԼԴ (1185), որը հաստատվում է այլ աղբյուրներով: Բացի այդ, հրատարակված բնագրում կան տարընթերցումներ ու կրճատումներ, ինչը երևում է ստորև ներկայացվող համեմատությունից:

Ստ. Օրբելյանի Ժամանակագրության հրատարակություն	*ՄՄ №9796 ձեռագիր*
Եւ վասն զի ազգն Հագարացոց առհասարակ միաբանեալ էին ի պատերազմն ընդդեմ Պարթեւական ազգին, որ Գունդն կոչի... (էջ 19):	*....եւ վասն զի ազգն Թուրքաց առհասարակ միաբանեալ էին ի պատերազմի ընդդէմ Պարթեւական ազգին, որ Քուրդն կոչի... (էջ 75ա):*
Աւերեցին զբազում վանորայս, որ եւ զմեծն եւ հռչակաւորն զսուրբ Կարապետն, որ եւ Գլակայ վանք, վասն զի յայսմ ժամանակի ամենայնիւ պայծառանայր՝ յառաջացեալ ի կամս աստուծոյ (էջ 20):	*Աւերեցին զբազում վանորայս, որ եւ զմեծ, հռչակաւոր, հոյակապ ուխտն սրբոյ Կարապետի նշխարացն, զոր սրբոյն Գրիգորի բերեալ ի Կեսարացոց քաղաքէն եւ անդ եդեալ եւ հիմնարկեալ տեղին կոչէ*

[4] *Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 83, 87:*

[5] *Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 32-35:*

[6] *Մատենադարանի ձեռագրացուցակի համաձայն XVII դ. մատյան է: Գրչության վայրն ու գրիչն անհայտ են: 2ա էջում ունի կնիք՝ «1717 թ., Պետրոս վրդ.» (Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Բ, Երևան, 1970, էջ 993): Ձեռագրի 1բ էջի վերին մասում թանաքով գրված է. «Միքայէլ արքեպիսկոպոսին է»: Սրանից վերև և ներքև պահպանվել է մատիտով գրված, դժվարությամբ ընթերցվող հետևյալ գրությունը. «Մինչև զԳրիգոր կաթ(ողիկոս) եղբայր Ներսիսի Շնորհալւոյն, յորոյ խնդրոյ յօրինեաց Սամուէլ զայս ժամանակագրութիւնն՝ 1164, թուական Հայոց ՈԺԳ»: Այստեղ ճիշտ է նշված Անեցու Ժամանակագրության սահմանը, թեև այս ձեռագրում այն շարունակված է նվազագույնը մինչև 1187 թ. (վերջին երկու թերթերը կտրված են). տե՛ս Կ. Մաթևոսյան. Սամուել Անեցու Ժամանակագրության ավարտման թվականը և պատվիրատուն.– ՊԲՀ, 1992, №1, էջ 156-162:*

[7] *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19:*

	յանուն Սուրբ Կարապետ, մականուն Գլակայ վանս, յանուն առաջին առաջնորդին, զոր պատմութիւնն ցուցանէ եւ Աթանագինէ հայրապետին եւ այլ բազում միանձանց ճգնաւորաց խոտաճարակաց, որ անդ հանգուցեալ են, զոր եւ բազում բժշկութիւնս կատարէր Աստուած ի ձեռն սրբոյն, նաեւ բազում մասամբք Տէրունականօք զարդարեալ էր եւ քահանայիւք սրբազանիւք, փառաւոր եւ անյաղթելի փիլիսոփայիւք, ունէր զհոգեւոր փարթամութիւն եւ զմարմնաւոր եւ յայսմ ժամանակի առաւել պայծառանայր ամենայնիւ յառաջացեալ ի կամս Աստուծոյ (էջ 75ա-75բ):
Իսկ յաւուրս պահոց առաջաւորին, քաղաքացիքն որ ասացաք, յառաջին տէրն իւրեանց դառնալ, զորս վաղ իմացեալ ամիրայն Կարնոյ քաղաքի, յարձակեալ ի վերայ նոցա... (էջ 20):	*Իսկ յաւուրս պահոց առաջաւորին ապստամբեցին քաղաքացիքն, որ Աւխթիքն ասացաք, կամելով յառաջին տէրն իւրեանց դառնալ, զոր վաղիմաց եղեալ ամիրայն Կարնո քաղաքի յարձակեալ ի վերայ նոցա... (էջ 76ա):*

Հարկ է նաև ավելացնել, որ հրատարակության մեջ հիշյալ հատվածը չունի նյութի բովանդակությանը վերաբերող ծանոթագրություններ (եղածները վերաբերում են ուղղագրական մանրամասների)[8]: Մինչդեռ այստեղ հիշատակվում է, օրինակ, Սբ. Կարապետի նահատակված Ստեփանոս եպիսկոպոսը, որի անունը հայտնի է միայն այս սկզբնաղբյուրի շնորհիվ: Եզակի են նաև Խլաթի ամիրայության մեջ ծավալված պատերազմական անցքերի մասին տեղեկությունները:

Հիշյալ հատվածը, Օրբելյանի Ժամանակագրության հրատարակության տարբերակով, պահպանվել է նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի թիվ 3397 ձեռագրում, որը վերահրատարակել է Ն. Պողարյանը[9]: Բնագրի հեղինակը, որը դեպքերի ժամանակակիցն է, պատմում է Սուքման Բ Շահ Արմենի մահից հետո՝ 1185–1186 թթ. Խլաթի ամիրայությունում առաջացած անիշխանության ժամանակ տեղի ունեցած դեպքերի, և առավել հանգամանորեն՝ Սբ. Կարապետ վանքին բաժին հասած դժբախտությունների մասին, ապա անդրադառնում Ուխտիք (Օլթի)

[8] *Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 87:*

[9] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 10, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1990, էջ 289-290: Այս բնագիրը, որպես Ստ. Օրբելյանի Ժամանակագրության մաս հրատարակված հատվածի հետ ունի որոշ տարբերություններ, ինչպես օրինակ՝ «Պարթևական ազգին, որ Գունդն կոչի» (էջ 19), «բէկ Թամուրն» (էջ 20), Երուսաղեմի ձեռագրում՝ «Պարթևական ազգին, որ Գուրդն կոչի», «Բեկդամուրն» (նույն տեղում):*

քաղաքի շուրջ ծավալված անցքերին, որին միջամտել են Կարինի ամիրան և Խլաթի նոր ամիրա Բեկթամուրը:

Ներկայացնենք 9796 ձեռագրում պահպանված բնագիրը[10]*:*

75ա Կամիմ աստանօր զանցս աղէտից եւ չարչարանաց ամենայն աշխարհի պատմել, առաւել ի վերայ աշխարհիս Հայոց, նախ ի վերայ քրիստոնէից, զի ի ՈԼԴ (1185) թվին մեռանի Հայոց ազգիս ամիրայն, որ յելից իրացն ունէր զանունն Շահի Արմէնն *կոչեցեալ. այս(ինքն) թագաւոր Հայոց, յաղագս քաղցր բարուց իւրոց, զի ունէր զգութ եւ զողորմութիւն ամենեսեան: Իսկ առ այսու թուականաւս մեռանի արտաքս աթոռոյն իւրոյ, ի գեօղն* Սարդխան *կոչեցեալ եւ վասն զի ազգն Թուրքաց առհասարակ միաբանեալ էին ի պատերազմի ընդդէմ Պարթեւական ազգին, որ Քուրդն կոչի, վասն որոյ պատրաստական գտեալ զինքեանս եւ զժամն դիպող, յարձակեցան ամենեքին առհասարակ ի վերայ ազգիս քրիստոնէից եւ հարին ի սուր սուսերի, զարս եւ զկանայս եւ զմանկունս վարեցին ի գերութիւն, քակեցին զբազում եկեղեցիս յափշտակելով զԿտակարանս սուրբս, նաեւ զտունս յորում բնակեալ էին մարդիկ՝ այրեցին առհասարակ եւ զամենայն անդաստանս անխնամաբար կերակուր արկին խաշանց իւրեանց եւ անասնոց, զի ժամ էր հնձոց, առհասարակ ամենեքեան մաշեցան սովով եւ սրով եւ գերութեամբ: Աւերեցին զբազում վանորայս, որ եւ զմեծ, հռչակաւոր, հոյակապ ուխտն* սրբոյ Կարապետի *նշխարացն, զոր* սրբոյն Գրիգորի *բերեալ ի* Կեսարացոց *քաղաքէն եւ*

75բ անդ եղեալ եւ հիմնարկեալ տեղին կոչէ յանուն սրբոյն՝ Սուրբ Կարապետ, *մականուն* Գլակայ *վանս, յանուն առաջին առաջնորդին, զոր պատմութիւնն ցուցանէ, եւ* Աթանագինէ *հայրապետին եւ այլ բազում միանձանց ճգնաւորաց խոտաճարակաց, որ անդ հանգուցեալ են, զոր եւ բազում բժշկութիւնս կատարէր Աստուած ի ձեռն սրբոյն, նաեւ բազում մասամբք Տէրունականօք զարդարեալ էր եւ քահանայիւք սրբազանիւք, փառաւոր եւ անյաղթելի փիլիսոփայիւք, ունէր զհոգեւոր փարթամութիւն եւ զմարմնաւոր, եւ յայսմ ժամանակի առաւել պայծառանայր ամենայնիւ յառաջացեալ ի կամս Աստուծոյ, զի եկք եւ պանդուխտք անդ հանգչէին, յաղագս ուսմանց եւ աստուածայնոց երաժշտական արհեստից յամենայն տեղեաց անդր ժողովելով:*

Իսկ յաղագս այսպիսի համբաւուն լինելոյ ո՛չ կարաց տանել այսմ ճշմարտութեան թշնամի, այլ յարոյց ի վերայ զկամարարս իւր, զնախասացեալ ազգսդ, որք միանգամ յարձակեցան ի վերայ տեղեացն սրբութեան, զբնակութիւնսն հրոյ ճարակ տուեալ եւ զինչսն յաւարի առեալ զԿտակարանս սուրբս եւ զսպասն սրբութեան գերի վարեալ ցրուեցին ընդ ամենայն ոլորտս տիեզերաց, զբազումս ի կրօնաւորացն սրբոց սպանին եւ զմեծ եպիսկոպոսն սուրբ զՍտեփաննոս, *զկոչեցեալն* Երեմիայի *որդի, սպանին, եւս այս գործեցաւ յաւուրս պահոց Վարդաւառի տօնին, քանզի առին* զԱսդունից *բերդն, որ այժմ կոչի* Կարճկօնից *բերդ, եւ* զՇանդերձաբերդն *կոչե-*

[10] *Բացի համառոտագրությունները բացելուց, ուղղագրությանը չենք միջամտել: Այստեղ և հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են:*

ցեալ, որ թէպէտ ամուր էր, սակայն ի հնարագիտութենէ չար ազգացն անգան եւ նոքա ի սուր սուսերի:

Իսկ ի խաղաղել փոքր մի թշուառութեանցն, յաւուրս տօնի Սրբոյ Խաչին դարձեալ ժողովեցան որք մնացեալք էին ի բարկութենէն, սպասաւորք Սրբոյ Կարապետին *լալագին անգանելով առաջի սրբոյն, զի մի՛ իսպառ բարկասցի, կամելով միաբանական ուխտիւ առ միմեանս բնակել, զի յայնժամ դեռեւս խցաւորք էին, իւրաքանչիւր ոք զիւրն հոգալով եւ ո՛չ զնկերին, իսկ յայնմ հետէ կամեցան զմիմեանց բեռն բառնալ, ըստ գրեցելումն, թէ ոչ ոք ասէր զնչից իւրոց, թէ իւր իցէ, զոր եւ արարին իսկ: Բայց զի ոչ եւս էր հաստատեալ աթոռ բռնակալութեան աշխարհի զի*

76ա ոչ ունէր ժառանգ թագաւորութեան իւրոյ Շահի Արմէնն, *վասն որոյ իւրաքանչիւր ոք աւազակաբար բազում սպանութիւն գործէին, որ եւ յարձակեցան կրկին անգամ ի վերայ սպասաւորաց* Սրբոյ Կարապետին *յաւուրս տօնի Սրբոյ Խաչին, ի գիշերի եւ հալածական արարին զմնացեալսն եւ Բ (2) քահանայիցն սպանին, վասն որոյ երկուցեալ փախեան, անբնակ թողլով զտեղին զայն զամն ողջոյն եւ ապա յերկրորդ ամին (1186) ժողովեցան ըստ առաջին ուխտին հաստատելոյ եւ են այժմ խաղաղացեալ փոքր մի, այլ զառաջիկայն Աստուած գիտէ:*

Ի նոյն ամի թշուառութեան, բռնակալն Կարնո *քաղաքի յարուցեալ ի վերայ անառիկ բերթին* Օխթիքն *անուանեալ եւ առեալ զնա յաւուրս տօնի Սուրբ Աստուածնին, իսկ ի գալ աշնանային աւուրց, յօր տաւնի Խաչ Գիւտին,* Բէկթամուրն, *որ եղեւ աթոռակալ* Շահի Արմէին, *զի զօրապետ էր զօրաց նորայ, սայ յարուցեալ բազում զօրօք եկն ի դուռն Կարնո քաղաքի, խնդրելով* զՕխթիքն *դարձուցեալ ի բնիկ տէրն իւր եւ իբրեւ ոչ դարձոյց, առ զերկիրն ամենայն յաւարի եւ զմասն քաղաքին հրով այրեաց եւ* զԲասեանսն *զերկուսին ի գերութիւն վարեաց, որ եւ զհամար գերութեան Ը Ռ (8 000) ասացին, զոր գտին եւ գնեցին, թող զկորուսեալսն եւ զսպանեալսն:*

Իսկ յաւուրս պահոց առաջաւորին ապստամբեցին քաղաքացիքն, որ Աւխթիքն *ասացաք, կամելով յառաջին տէրն իւրեանց դառնալ, զոր վաղիմաց եղեալ ամիրայն* Կարնո *քաղաքի յարձակեալ ի վերայ նոցա բազում զօրօք եւ զամենեսեան ի գերութիւն վարեաց, զինչս նոցա յափշտակելով գրաւեաց ընդ իւրոյ իշխանութեան զքաղաքն եւ զբերդն: Ի նոյն ամի էառ* Բէկթամուրն զՎան *եւ* զՈրոտան *եւ* զԲաղէշ, *զաշխարհն այրեց մինչեւ հնազանդեցոյց ընդ իւրով իշխանութեամբն:*

Այն, որ բնագրի հեղինակը դեպքերի ժամանակակիցն ու Սբ. Կարապետի վանքի պատմությանը ծանոթ մարդ է եղել, երևում է վանքի միաբանների վերադարձի մասին նրա գրած, հիշատակարանային ձևակերպում հիշեցնող խոսքերից. «...ժողովեցան ըստ առաջին ուխտին հաստատելոյ եւ են այժմ խաղաղացեալ փոքր մի, այլ զառաջիկայն Աստուած գիտէ*»: Հեղինակի բնակության տարածքի մասին է հուշում նաև այն, որ նա Շահ Արմենին համարում է «Հայոց ազգիս ամիրայն», «քաղցր բարուց» տեր (Շիրակում կամ Սյունիքում ապրողը նման բան չէր գրի), այսինքն՝ Խլաթի ամիրայության բնակիչ էր, հավանաբար՝ տարոնեցի: Նրա*

խոսքն անմիջական է և գրված թարմ տպավորությունների ազդեցությամբ[11]: Հեղինակը, կարևոր դեպքերի առնչությամբ, նշում է եկեղեցական տոների անունները, որը դրանց ժամանակը ամսաթվերի ճշգրտությամբ որոշելու հնարավորություն է տալիս:

1185 թ. անցքերի մասին շատ համառոտ նշում է նաև Վարդան Արևելցին. «...մեռաւ Շահի-արմէնն անորդի, եւ աւեր եւ սուր եւ գերութիւն բազմացաւ ի վերայ աշխարհի նորա ի շրջակայ ազգացն»[12]: 1185 թ. Շահ Արմենի մահվան մասին գրել են նաև Սամվել Անեցու Ժամանակագրության շարունակողները[13]:

Ներկայացված բնագրի հեղինակը անթաքույց համակրանքով է խոսում Շահ Արմենի մասին, որը հասկանալի է դառնում նրա տիրապետության մասին նաև Վարդան Արևելցու հայտնածի շնորհիվ, թե վերջինս երկիրը «պահէր ի խոր խաղաղութեան, զամս վաթսուն»[14]: Այս տևական խաղաղության արդյունքում էր, որ առաջընթաց է ապրել նաև Սբ. Կարապետի վանքը, ձեռք բերելով «զհոգեւոր փարթամութիւն եւ զմարմնաւոր», *որովհետև՝ «...եկք եւ պանդուխտք անդ հանգչէին, յաղագս ուսմանց եւ աստուածայնոց երաժշտական արհեստից յամենայն տեղեաց անդր ժողովելով»[15]:*

Անզավակ ամիրայի մահը, բնականաբար, անիշխանության ու ասպատակությունների առիթ է դառնում, որի հիմնական զոհը ամիրայության անպաշտպան քրիստոնյա բնակչությունն էր: Իբն ալ-Ասիրը հայտնում է, որ Շահ Արմենը մահացել է 1185-ի հունիսի 12-ին[16]: Փաստորեն, անմիջապես դրանից հետո սկսվել են հայ բնակչության վրա հարձակումները, քանի որ այդ մասին գրող մեր հեղինակը նշում է՝ «զի ժամ էր հնձոց»: Սակայն կատարվածը միայն ավազակություն չէր, այլև ռազմական գործողություններ էին, որոնց հետևանքով գրավ-

---

[11] *Հեղինակի դիտողականության արտահայտություններից է այն, որ նա գերության ու կողոպուտի մասին գրելուց հետո նշում է երկրագործ բնակչության համար աղետալի մի իրողություն՝ «զամենայն անդաստանս անխնամաբար կերակուր արկին խաշանց իւրեանց եւ անասանց»:*

[12] *Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի. Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 135-136:*

[13] *«Ի ՈԼԴ թվին մեռանի Շահիարմէն սուլտանն Իգաթայ (պետք է լինի Խլաթայ – Կ. Մ.) ի գեօղն որ կոչի Սարթհան» (Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 140): Այս շրջանի իրադարձություններին համակողմանիորեն անդրադարձել է Հ. Մարգարյանը (տե՛ս Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Քաղաքական կացությունը Մերձավոր Արևելքում և Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII–XIII դդ.).– ՊԲՀ, 1989, № 1, էջ 36-40):*

[14] *Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի. Տիեզերական պատմություն, էջ 128: Սուքման Բ-ը գահակալությունը սկսել է տատի հետ, երբ դեռ վեց տարեկան էր: Հետագայում նա մեծապես զորացրեց ամիրայությունը, համարվելով տեր «ԺԲ (12) քաղաքաց» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 134, տե՛ս նաև Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 62-64):*

[15] *Հրատարակության մեջ այս հատվածում բացակայում են «երաժշտական արհեստից» բառերը. հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 20:*

[16] *Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Երևան, 1981, էջ 269, Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Քաղաքական կացությունը..., էջ 37:*

վում է «զԱստունից բերդն, որ այժմ կոչի Կարճկօնից բերդ և զՀանդերձաբերդն կոչեցեալ»[17]*:*

Դեպքերի մասին գրող հեղինակը մանրամասն է ներկայացնում հատկապես Սբ. Կարապետ վանքին պատահած դժբախտությունները, որը ենթարկվում է հարձակման ու կողոպուտի: Վանքի պատմության համար կարևոր է Ստեփանոս եպիսկոպոսի մասին («որդի Երեմիայի») հիշատակությունը: Նա մահմեդականների ձեռքով նահատակվում է « յաւուրս պահոց Վարդաւառի տօնին*», այսինքն 1185 թ. հուլիսի 20-ին (Վարդավառ) նախորդող շաբաթվա մեջ (հուլիսի 14–19)*[18]*:*

*Ս. Կարապետի պատմությանն անդրադարձած Հ. Ոսկյանը, նշելով XI դ. կեսերի դեպքերը (Գրիգոր Մագիստրոսի թուղթը Սարգիս վանահորը, Մուշեղի որդի Թոռնիկի մահն ու թաղումը Ս. Կարապետի վանքում), գրում է. «*Ասկե ետքը Ս. Կարապետին շուրջը երկարատև լռություն կը տիրե: *Միայն Կիրակոս Գանձակեցիե գիտենք՝ թե Կուզ և Մելիք Աշրաֆ՝ Իվանեի աղջկան խնդրանքին ընդառաջելով Տարոնի հարկատու վանքերուն «թեթեւացուցին զսակ հարկին», հետևաբար և Սբ. Կարապետին»*[19]*: Իսկ Կարապետ վրդ Լուսարարյանի կազմած գավազանագրքում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատկերը հետևյալն է.*

« 33. Տ. Դաւիթ Բ՝ յամի Տեառն 1180

Տարօնցի, յիշուած 1180-ին Հռոմկլայի եկեղեցական ժողովին առթիւ...

34. Տ. Յովհաննէս Դ՝ յամի Տեառն 1181

(Չամչեանը յիշած է զայն յամի իբր 1181)

35. Տ. Խաչատուր՝ յամի Տեառն 1204»[20]*:*

1185-ին եղերական վախճան ունեցած Ստեփանոս եպիսկոպոսի անունը պետք է տեղ գրավի Հովհաննեսի անունից հետո՝ վանքի նույնանուն մյուս առաջնորդների շարքում (Ստեփանոս Գ - 629 թ, Ստեփանոս Դ 1464 թ.)[21] *և համարվի Ստեփանոս Դ:*

Վանքի պատմության և ընդհանրապես միջնադարյան հայ վանականության կյանքի ուսումնասիրության տեսակետից հետաքրքրական է նաև այն հատվածը, ուր խոսվում է թշնամու հարձակումից ահաբեկված և Սուրբ Կարապետի զայրույթից սարսափած միաբանների որոշման մասին՝ «միաբանական ուխտիւ առ

---

[17] *Հրատարակության մեջ նույն հատվածը հետևյալ տեսքն ունի. «առին* զԱստեղունից *բերդն, որ այժմ կոչի* Կաճկաունից *բերդ և* զՀանդերձաբերդն*» (Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 20): Բերդի մասին Ղ. Ինճիճյանը գրում է. «Աստնաբերդը... Մուշէն ժամ մը հեռու» (Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն. Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 188): Սա այլ աղբյուրներում «Աստղօն», «Աստեղունք» անվանված Աստղաբերդն է (Մ. Հ ո վ հ ա ն ն ե ս յ ա ն. Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 183-185): Ըստ Հովհան Մամիկոնյանի՝ Գրիգոր Լուսավորիչը Սյունյաց իշխանի հինգ հազար զինվորներին մկրտել է այս բերդի մոտ (տե՛ս Հ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն յ ա ն. Տարոնի պատմություն, Երևան, 1980, էջ 46): Հայտնի են Կարճկանի լեռնաշղթան, Կարճկանի գետը, Կարճկանի դաշտը (տե՛ս Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 50): Վերը բերված հատվածը կարելի է նաև հասկանալ այնպես, որ «Հանդերձաբերդը» Աստղաբերդ-Կարճկոնից բերդի երրորդ անունն էր:*

[18] *Մեր խնդրանքով բնագրում նշված եկեղեցական տոներին համապատասխանող ամսաթվերը որոշել է տոմարագետ Գրիգոր Բրուտյանը, որին շնորհակալություն ենք հայտնում:*

[19] *Հ. Ո ս կ յ ա ն. Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 173:*

[20] *Կ. Լ ո ւ ս ա ր ա ր ե ա ն. նշվ. աշխ., էջ 64:*

[21] *Նույն տեղում, էջ 116-117:*

միմեանս բնակել, զի յայնժամ դեռեւս խցաւորք էին, իւրաքանչիւր ոք զիւրն հոգալով եւ ո՛չ զնկերին, իսկ յայնմ հետէ կամեցան զմիմեանց բեռն բառնալ... զոր եւ արարին իսկ»:

Այնուհետեւ վանքը ենթարկվում է նոր հարձակման, սպանվում են երկու քահանա: Դա տեղի է ունենում «յաւուրս տօնի Սրբոյ Խաչին»՝ 1185 թ. սեպտեմբերի 14-ին : Դրանից հետո, ըստ հեղինակի, միաբանները մի ամբողջ տարի լքում են մենաստանը: Հետևաբար, նրանք կրկին վանք են վերադառնում 1186-ի աշնան սկզբին:

Հետաքրքիր է, որ հեղինակն այս խառնակ իրադարձությունների պատճառ է համարում ուժեղ իշխանության բացակայությունը՝«զի ոչ եւս էր հաստատեալ աթոռ բռնակալութեան աշխարհի»: Վերջապես վիճակը որոշ չափով կարգավորվում է մահացած ամիրայի զորահրամանատար Բեկթամուրի իշխանության գալով: Սակայն սա էլ իր իշխանությունն ամրապնդելու համար ընդհարվում է Կարինի ամիրայի հետ, որը «ի նոյն ամի թշուառութեան», այսինքն՝ 1185 թ., «յաւուրս տօնի Սուրբ Աստուածնին»՝օգոստոսի 17-ին, գրավել էր Ուխտիքը: Բեկթամուրը փորձում է Ուխտիքը վերադարձնել նախկին տիրոջը: Հայտնի է, որ Ուխտիքը պատկանել է Կեչրորի Ղարաչա ամիրային, որին ինչ-որ պատճառով սպանել է Շահ Արմենը 1182 թ.[22]: Դրանից հետո նրա տիրույթները, և մասնավորապես Ուխտիքը, Շահ Արմենը, հավանաբար, հանձնել է նույն Ղարաչայի տնից որևէ մեկին, քանի որ բնագրի հեղինակի վկայությամբ Կարին արշաված Բեկթամուրը պահանջում էր «զՕխթիքն դարձուցեալ ի բնիկ տէրն իւր*»: Նա արդյունքի չհասնելով՝ «յօր տաւնի Խաչ Գիւտին»՝հոկտեմբերի 26-ին, այրում է քաղաքի մի մասը և ավարի առնում շրջակա գավառները, մասնավորապես նաև Կարինի և Ուխտիքի միջև գտնվող Բասենը:*

Որոշ ժամանակ անց՝ «յաւուրս պահոց առաջաւորին», այսինքն՝ արդեն 1186 թ. հունվարի 19-ից 23-ն ընկած ժամանակամիջոցում, ապստամբություն են բարձրացնում Ուխտիքի բնակիչները, նախկին տիրոջը վերականգնելու պահանջով, սակայն Կարինի ամիրան այդ մասին շուտ իմանալով հարձակվում և գրավում է քաղաքն ու բերդը, բնակիչներին գերության մատնում: Ուխտիքի քաղաքացիների ապստամբության փաստն ինքնին ուշագրավ է, քանի որ ինքնուրույնության համար քաղաքների մղած պայքարի դրսևորումներից է, որն ավելի վաղ սկսվել էր Անիում և Տփղիսում[23]:

Հեղինակն այնուհետեւ նշում է, որ «ի նոյն ամի», այն է՝ 1186-ին, Բեկթամուրը գրավում, հնազանդեցնում է Վանը, Ոստանը, Բաղեշը: Այս տեղեկությամբ եզրափակվում է Խլաթի ամիրայության պատմությանը վերաբերող հատվածը[24]: Վերո-

---

[22] *Պատմիչը գրում է, որ Կեչրորի Ղարաչա ամիրան Գորոգո խաչը ջարդելու համար աստվածային պատժի արժանացավ և սպանվեց: Հասկանալի է, որ Շահ Արմենն իր ստորակա Ղարաչային սպանելու այլ պատճառ պիտի ունենար (տե՛ս* Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի. *Տիեզերական պատմություն, էջ 135, նաև* Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. *Քաղաքական կացությունը..., էջ 37):*

[23] Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. *Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի..., էջ 89-97, 102-104:*

[24] *Շարունակությունը վերաբերում է ՈԼԶ (1187) թվականին Սալահադդինի կողմից Երուսաղեմի գրավմանը (էջ 76ա-76բ), որն անավարտ է մնում ձեռագրի հաջորդ երկու թերթերի կտրված լինելու պատճառով:*

հիշյալ դեպքերը պատմագիտությանը հայտնի են միայն սույն սկզբնաղբյուրի շնորհիվ:

ՄՄ № 9796 ձեռագրում վկայակոչված մեծ հատվածից առաջ տեղ է գտել Տարոնի պատմությանը՝ Սասունի Վիգեն իշխանին վերաբերող ևս երկու փոքրիկ նշում, որոնցից առաջինը չկա հրատարակության մեջ (հետևաբար, ՄՄ №8481 ձեռագրում): Վրաց Գեորգի Գ (1156–1184) թագավորի՝ 1162 թ. Դվինը գրավելուն վերաբերող տեղեկությունից հետո նշված է. «Եհան Շահի Արմէն զմեծ իշխանն Վէգեն ի Սանսոյ» *(էջ 74բ)[25]: Շահ Արմենի՝ Խեղենեկ Արծրունուց Ամյուկը, իսկ Վիգենից Սասունը վերցնելու մասին հայտնում է նաև Վարդան Արևելցին, առանց թվական նշելու[26]:*

Երկրորդ վկայությունը վերաբերում է Վիգենի մահվանը. «Ի սոյն ամի մեռաւ Վէգեն տէրն Սասնոյ» *(էջ 75ա): Հրատարակության մեջ այն նշված է 1176 թ. դիմաց[27]: Իսկ № 9796 ձեռագրում տեղեկությունը նախորդում է 1175 թ. կատարված դեպքին[28]:*

Հնարավոր է, որ ժամանակագրական այս երկու միավորները ևս մեծ հատվածի հեղինակի կատարած ավելացումներն են[29]:

Այսպիսով, Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ հավելում կատարած, հավանորեն, Տարոնում բնակված հեղինակը տեղեկացնում է 1185–1186 թթ. Խլաթի ամիրայության մեջ և մասնավորապես Ս. Կարապետի վանքում տեղի ունեցած դրամատիկ անցքերի մասին: Ներկայացված բնագիրն ուշագրավ է ոչ միայն պարունակած պատմական տեղեկություններով, այլև ժամանակագրական ճշգրտությամբ ու զանազան մանրամասներով:

---

[25] *Իշխանի և երկրամասի անունների գրության ձևը համահունչ է 1169 թ. Սասունի Ավետարանի (Արիստակես գրիչ) հիշատակարանի գրությանը. «...ի տէրութեան Սանսնոյ Վեգենայ...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 194): Իշխանի անվան կապակցությամբ Ն. Ակինյանը գրում է. «Ճշտագոյնը կհամարիմ Վեգեն, ինչպես նեկայացուցած է ժամանակակից Արիստակէս գրիչ» (Ն. Ա կ ի ն յ ա ն. Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 404):*

[26] *Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի. Տիեզերական պատմություն, էջ 127-128: -9796 ձեռագրում ևս այս տեղեկության թվականը դժվար է որոշել, քանի որ Ժամանակագրության վերջամասում՝ 74բ-75ա էջերում, նշված տեղեկությունների մի մասը թվական են պարունակում հենց իրենց մեջ (Հայոց մեծ թվականով), որոնք կից գտնվող աղյուսակում նշված տարեթվերից բավական հեռու են:*

[27] *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 19:*

[28] *«ՈՒԴ (1175) թվին աթաբակ Էլտկուզն պաշարեաց զԱնի եւ աւերեաց բազում եկեղեցիս ի Շիրակ...» (էջ 75ա). հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, էջ 18:*

[29] *Սամվել Անեցու Ժամանակագրության ընդօրինակությունների քննությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց գրչության կամ պահպանության վայրերում, գրիչների կամ ստացողների ձեռքով լրացվել են տվյալ վայրի պատմությանը վերաբերող տեղեկություններով: Օրինակ՝ Հոռոմոսում ընդօրինակված ձեռագրում տեղեկություն է մուծված վանքի Ս. Հովհաննես եկեղեցու հիմնադրման մասին (ՄՄ, ձեռ. № 3613, էջ 60բ), Հավուց թառի վանքի առաջնորդին պատկանած ձեռագրում ավելացվել են այդ վանքի պատմության վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ (ՄՄ, ձեռ. № 3681), Թադեի վանքում պահված ձեռագրում կան այդ վանքի պատմությանը վերաբերող հավելումներ (ՄՄ, № 7261) և այլն:*

ЭПИЗОД ИЗ ИСТОРИИ МОНАСТЫРЯ СВ. КАРАПЕТА В МУШЕ

КАРЕН МАТЕВОСЯН

Р е з ю м е

Текст, повествующий о событиях 1185-1186 гг., имевших место в одной из самых знаменитых обителей Армении в находящемся близ Муша монастыре св. Карапета (св. Предтечи), является интерполяцией, вошедшей в Хронику Самвела Анеци. Краткий текст оригинала был опубликован в 1942 г. А. Абраамяном по рукописи Матенадарана № 8481. Более пространный и верный текст в рукописи Матенадарана № 9796 представлен данной публикацией. Автор текста (имя его неизвестно), очевидно, житель Тарона, рассказывает о начавшихся в крае после смерти эмира Ахлата Сукмана II Шах Армена драматических событиях – нападении мусульман на монастырь св. Карапета, убийство епископа Степаноса (имя, сохранившееся только в этом источнике). После этого братья монастыря на год покидают обитель. Автор упоминает также военные действия (взятие крепости Астхаберд, поджог части города Карина, восстание в городе Олти) с точным указанием дат событий.

A HISTORICAL FRAGMENT OF ST. KARAPET CHURCH IN MUSH

KAREN MATEVOSYAN

S u m m a r y

The St. Karapet (Glaka) Church near Mush was one of the most famous Armenian places of worship. An original manuscript covering its historical events during 1185-1186 was later included in Samvel Anetsi's chronicles. The short version of the original was published from № 8481 manuscript of the Matenadaran by A. Abrahamyan in 1942; and the more complete and authentic version was preserved in № 9796 manuscript of the Matenadaran, which is the source of the current publication. The author of the original (the name has not been preserved) was probably a resident of Taron region. He describes the existing disorder after Emir Sukman II Shah Armen's death in Khlat. As a result, Muslims attack the St. Karapet Church and kill the archbishop Stepanos (his name has been preserved only in this original). Afterwards, the church monks leave it for one year. Also, the original has data about military actions (the defeat of Astghaberd, partial burning of Karin, and the rebellion in Olti), with the exact dates provided by the author.